

ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

Հայաստանի ծաղկուն և շեն մայրաքաղաք Անին գրավվեց սելջուկյան թուրքերի կողմից 1064 թ.: Հետագայում՝ 1072—1199-ի ժամանակահատվածում (որոշ ընդմիջումներով) տիրել են քրդական ծագում ունեցող Շադդադյան ամիրայության զորքերը, որոնք անկման էզրին հասցրին քաղաքի մշակութային և տնտեսական կյանքը: Հայաստանն և մայրաքաղաք Անին ավելի մեծ հարված ստացան արևելքից ժամանած թաթար-մոնղոլական արշավանքի ժամանակ: 1236 թ. Անին գրավեցին մոնղոլները: Քաղաքի բնակիչներն երկու անգամ՝ 1249-ին և 1260-ին ապստամբեցին ներխուժող այդ վայրագ ցեղերի դեմ, բայց դաժանորեն ճնշվեցին: 13—14-րդ դարերում մոնղոլների ճնշումների, ապա նաև ծանր հարկերի պատճառով, սանեցիներն և Հայաստանի բազմաթիվ բնակիչներ, մեծ խմբերով սկսեցին լքել իրենց հայրենիքը, արտագաղթել և ապաստան գտնել օտար երկրներում, այսպես օրինակի համար Վրաստան, հարավային Ռուսաստան (Աստրախան և Ղրիմի զանազան քաղաքները), իսկ ավելի ուշ՝ Ղրիմից գաղթեցին Կոստանդնուպոլիս, Գալիցիա, Լեհաստան և Դոն գետի ափին հիմնեցին Նոր Նախիջևան քաղաքը[1]:

Վերոհիշյալ ավերիչ արշավանքների հետևանքով հայերի գաղթը դեպի արևմուտք պատճառ դարձավ, որ հայկական համայնքները բազմանան Բյուզանդական կայսրության մեջ: Ռուբեն իշխանը գրավեց Լեռնային Կիլիկիո մեծ մասն և 1080 թ. այստեղ հիմնեց հայկական իշխանություն, որն սկզբում ուներ կիսանկախ կարգավիճակ, իսկ հետագայում հանդիսացավ անկախ պետականություն: Այն գոյատևեց շուրջ երեք դար, բայց Փոքր Ասիայից ժամանած թուրքերի, իսկ ապա 1375 թ. Եգիպտոսի մամլուքների կատարած արշավանքների հետևանքով կործանվեց Կիլիկիո հայոց թագավորությունը: Հայոց վերջին Լևոն Զ թագավորն իր ընտանիքով գերի տարվեց Եգիպտոս:

Կիլիկիո հայոց գերիշխանության ժամանակ (1080—1375 թթ.) տեղի ունեցան Խաչակրաց արշավանքները: ԺԱ դարում քրիստոնեության կենտրոն Երուսաղեմ քաղաքը գրավված էր սելջուկ թուրքերի կողմից: 1095 թ. Ֆրանսիայի Կլերմոն քաղաքում գումարված եկեղեցական ժողովում Հռո-

[1] Հայկական համառոտ հանրագիտարան, Ա հատոր, Երևան, 1990, էջ 206:

մեական Կաթոլիկ եկեղեցու պետի՝ Ուրբանոս Բ-ի առաջարկով որոշվեց Եվրոպայում հավաքագրել քրիստոնյա զորաբանակ, որպեսզի արշավի դեպի արևելք, գրավի Երուսաղեմ քաղաքն ու ազատագրի Քրիստոսի անձի հետ կապված Սուրբ վայրերը, այլակրոն մահմեդականների ձեռքից[2]:

Պատմության մեջ հայտնի են Խաչակրաց ութ արշավանքներ, որոնց առաջինը տեղի ունեցավ 1096—1099 թթ., իսկ վերջինը 1270 թ., որով տևեցին ուրջ երկու դար[3]: Արշավող բանակը բաղկացած էր եվրոպական քրիստոնյա զանազան պետությունների տրամադրած զորքով: Դրանց մեջ կային ֆրանսիացիներ, գերմանացիներ, իտալացիներ և այլ ազգությունների պատկանող զորքեր: Այս արշավանքների ղեկավարներ հանդիսացան եվրոպական զանազան երկրների իշխաններ և արքաներ: Այս զորաբանակները ցամաքային ճամփով գալիս էին Փոքր Ասիա, ժամանում Կիլիկիայի հայոց թագավորության երկրամասը, ուր որոշ ժամանակ հանգստանում և հյուրասիրվում Կիլիկիո հայերի, ինչպես նաև պետության կողմից: Կիլիկիա ժամանած եվրոպական բանակների իշխանները, որոնք հյուրասիրվում էին հայոց թագավորների կողմից ամուսնացած մեր թագավորների քույրերի կամ արքայազուն դուստրերի հետ, որոնք հետագայում դարձան Երուսաղեմում կազմված քրիստոնյա թագավորության թագուհիներ, այսպես օրինակի համար.

1. Արտա (ԺԲ դար) Կիլիկիո Թորոս Ա իշխանի դուստրը, Երուսաղեմի թագուհի, Բելգիայի Պաղտին (Բոդուեն) Ա թագավորի կինը[4]:

2. Մարֆիա (ԺԲ դար) Մալաթիայի հրամանատար Գաբրիել իշխանի դուստրը, Երուսաղեմի թագուհի, Եդեսիայի կոմս (1100—1118 թթ.) և Երուսաղեմի թագավոր (1118—1131 թթ.) Պաղտին Բ-ի կինը[5]:

3. Մելիսանդ (ԺԲ դար) Երուսաղեմի Պաղտին Բ թագավորի և հայազգի Մարֆիա թագուհու աղջիկը, ինքը Երուսաղեմի թագուհի, Ֆուլք թագավորի կինը[6]:

4. Ագնես (ԺԲ դար) Կիլիկիո Կոստանդին Ա-ի թոռը, Ժոսլին Բ-ի աղջիկը, Երուսաղեմի թագուհի, Բոդուեն Գ-ի եղբայր՝ Ամորի Ա թագավորի կինը[7]:

5. Ռիթա (ԺԳ դար) հայոց Լևոն Ա թագավորի դուստրը, Երուսաղեմի թագուհի, Հովհան Բրիենն թագավորի կինը[8]:

Սրանցից բացի կան նաև արքայազն ուրիշ հայուհիներ, որոնք այս ժամանակաշրջանում ամուսնացած են Կիպրոսի սենեսկալի, Անտիոքի ժառանգի, Եդեսիո կոմսի, Սիդոնի տեր արքաեղբոր, Կիպրոսի թագավորի, Հոպպեի իշխանի և օտարազգի արքաների հետ:

Ստույգ տեղեկություններ կան, որ նույնիսկ թաթար-մոնղոլական և Խաչակրաց արշավանքների առաջ իսկ եղել են բազմաթիվ հայեր (վաճառականներ, դիվանագետներ, հոգևորականներ և այլն), որոնք այցելել, ապրել և գործել են Հեռավոր Արևելքից (Չինաստան) մինչև Եգիպտոս, եվրոպա-

---

[2] Petit Larousse, Paris, 1961, p. 1298.

[3] Նույն տեղում:

[4] Ղ. Ալիշան, Սիսվան, Վենետիկ, 1885, էջ 371:

[5] Հանդես ամսօրյա, Վիեննա, օգոստոս-հոկտեմբեր, 1934, էջ 445:

[6] Նույն տեղում:

[7] Նույն տեղում, էջ 446:

[8] Ղ. Ալիշան, նույն տեղում: Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Բ հատոր, Երևան, 1944, էջ 48:

կան զանազան երկրներից մինչև Երուսաղեմ և այլն: Օրինակի համար ԺԱ—ԺԲ դարերում Եգիպտահայ գաղութն այնքան աճեց ու բազմացավ, որ տարբեր քաղաքներում ունեցած հայկական վանքերի, եկեղեցիների և մատուռների քանակը հասավ երեսունի[9]: Այսօր դեռ պահպանված են Վերին Եգիպտոսի Սոհակ քաղաքի մոտերը գտնվող Սպիտակ վանքի (Դեյր էլ-Աբիադ, այժմ պատկանում է Ղպտի եկեղեցուն) չորս որմնանկարներն ու հայերեն արձանագրությունները[10]:

Թաթար-մոնղոլների Հայաստան կատարած ավերիչ և դաժան ժամանակում աճեց մեր երկրի բնակչության արտահոսքը դեպի ավելի ապահով երկրները: Եվրոպացի խաչակիրների տուն վերադարձի ժամանակ բազում հայեր ևս նրանց հետ մեկնեցին Եվրոպա և մշտական բնակություն հաստատեցին այնտեղ: Այսպես օրինակի համար, թեպետև կցկտուր տեղեկություններ կան Միջին դարերի Բուլղարահայ գաղութի մասին, սակայն, ինչպես գրում է պատմաբան Աշոտ Աբրահամյանը «9—13-րդ դարերում տասնյակ հազարավոր հայ գաղթականություն է տեղափոխվել Բուլղարիա, հայկական ստվար գաղթօջախներ են ստեղծվել այնտեղ և զգալի դեր կատարել երկրի քաղաքական, հասարակական և կուլտուրական կյանքում[11]:

Որոշ տեղեկություններ կան նաև ենթադրելու, որ Ֆրանսիան անծանոթ երկիր չի եղել հայերի համար միջնադարում: Աշոտ Աբրահամյանը գրում է, որ «հայ առևտրականները ապրանքափոխանակություն են կատարել Գալիայում (Ֆրանսիայի նախկին անունը (6—7-րդ դարերում»[12]: Ապա նա նշում է, որ 9—10-րդ դարերից մեզ հասել է «հայ-լատիներեն մի գրուցատություն՝ կցված Հերմանիոսի նամակին», որով գտնում է, որ հայոց լեզվի նկատմամբ մեծ հետաքրքրություն կար այդ ժամանակ Ֆրանսիայում, որովհետև հայ առևտրականներ, դիվանագետներ, ճարտարապետներ, արհեստավորներ և այլն, գալիս էին Ֆրանսիա, շփվում տեղացիների հետ և նույնիսկ ապրում այստեղ երկար ժամանակով:

Միջին դարերում մի շարք հայ եպիսկոպոսներ այցելել, գործել և վախճանվել են եվրոպական զանազան երկրներում: Այսպես, օրինակի համար, Անտիոքի հայ եպիսկոպոս Մակարը (պաշտպան Գանդ քաղաքի) 1011 թ. գնացել և հաստատվել է Բելգիայի Գանդ քաղաքի Սուրբ Բավոն վանքում: Հաջորդ տարի՝ 1012 թ. նա վախճանվել է ժանտախտից: 1067 թ. Հռոմի եկեղեցին սրբացրել է նրան և ամեն տարի ապրիլի 10-ին նշվում է նրա հիշատակը[13]:

Գրիգոր արքեպիսկոպոսը վախճանվել է Ներքին Բավարիայի Պասսաու քաղաքի Նիդերնբուրգ վանքի (10-րդ դար) Ս. Խաչ տաճարում 1093 թ.[14]:

---

[9] Սրանց ամբողջական ցուցակը տեսնել Ն. Տեր-Միքայելյանի «Եգիպտահայ գաղութը 10—15րդ դարերում» գրքում, Բեյրութ, 1980, էջ 260—261:

[10] Սրանց հաջող և գեղեցիկ լուսանկարները (որոնք նկարված են 1124—1125 թթ.)՝ տեսնել հետևյալ գրքում՝ Angèle Kapolan-Kouyoumjian, L'Égypte vue par des Arméniens, Paris, 1988, pl. I—IV, նաև գրքի շապիկի վրայի Ս. Հովհաննեսի զարդանկարը:

[11] Պրոֆ. Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1964, էջ 305:

[12] Նույն տեղում, էջ 418:

[13] Ղ. Ալիշան, Հուշիկք, Ա. 73: Ալիշան, Սիսական, Ս. Ղազար, 1893, էջ 461: Հ. Անանյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Գ, Երևան, 1946, էջ 168: «Գրական թերթ» շաբաթաթերթ, Երևան, 17 հուլիսի 1992, էջ 2:

[14] «Էջմիածին» ամսագիր, Էջմիածին, հուլիսի 1981, էջ 46: «Գրական թերթ» շաբաթաթերթ, Երևան, 17 հուլիսի 1992, էջ 2: Histoire des Arméniens, Toulouse, 1986, p. 393.



1. ՕՎԵՐՆՅԻ ԳԱՎԱՌԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ



2. ԿԼԵՐՄՈՆ-ՖԵՐԱՆԻ ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ



4. ՍԵՆ-ՍԱՏՅՈՒՐՆԵՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

SAINT-SATURNIN



8. ԻՍՈՒԱՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ



6. ՕՐՍԻՎԱԼԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ



12. ՀԻՆԳ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԵՐ



11. ՍԵՆ-ՆԵԿՏԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ



9. ՍԵՆ-ՆԵԿՏԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

Գալով Ֆրանսիային, աղբյուրները հիշատակում են մի ոմն Սիմոն եպիսկոպոսին, որ հալածվելով սասանյան պարսիկների կողմից, 6-րդ դարի վերջերին՝ 591 թ. ժամանել և հյուրընկալվել է Տուր քաղաքի Մայր եկեղեցում, Գրիգոր անունով հոգևորականի կողմից[15]:

Հարավային Ֆրանսիայի Թալլար բնակավայրում ամեն տարի մի օր հատուկ հայաձեւ հայերեն պատարագ է մատուցվում Գրիգոր եպիսկոպոսի հիշատակին, երբ բազմաթիվ հայ և ֆրանսիացի հավատացյալներ ուխտի են գնում այդ օր և ներկա լինում այդ հանդիսության: Գրիգոր եպիսկոպոսը վախճանված է 4-րդ դարում և նա սրբացված է Կաթոլիկ եկեղեցու կողմից[16]:

Կենտրոնական Ֆրանսիայի Օրլեան քաղաքի մոտ կա մի փոքր բնակավայր՝ Փիթիվիե անունով, ուր թաղված է նույնպես մի ուրիշ հայազգի սուրբ, որ վախճանվել է 11-րդ դարում: Կրոնական տոմարներում միշտ հիշվում է նրա ազգային ծագումը[17]:

Ֆրանկո-հայկական դարավոր կապերը չեն սահմանափակվում միայն առևտրականների և հայ հոգևորականների Ֆրանսիա այցելության հարաբերություններով: Եկեղեցական ճարտարապետության պատմության ակնավոր մասնագետներ գտնում են, որ ակնհայտ կերպով նմանություններ կան երկու երկրների պատմական հուշարձանների մեջ: Այսպես արվեստի ավստրիացի պատմաբան Յոզեֆ Ստրժիգովսկին «գտնում է, որ Ֆրանսիայի Օրլեան քաղաքի մոտ գտնվող Սեն-Ժերմեն-դե-Փրե (11-րդ դարի) եկեղեցին կառուցված է հայկական ոճով»[18]: Ֆրանսիական ճարտարապետության վրա հայկական ոճի ազդեցության մասին է գրում նաև ֆրանսիացի արվեստաբան Մարսել Դյուրլիաթը ևս իր գրքում, որ նվիրված է ռոմանական արվեստին[19]:

13-րդ դարի կեսերին Փարիզում կառուցված Սենտ Շապել գլուխ գործոց մատուռի վերին կապելլայի շքամուտքը, ի թիվս այլ հարթաքանդակների, զարդարում է Զվարթնոցի տաճարը պատկերող մի հարթաքանդակ: Որով պարզվում է, որ 13-րդ դարում եղել է մի հայ ճարտարապետի ձեռքի գործի արդյունքը վարի վրա[20]:

Մինչև Խաչակրաց արշավանքները հայ-ֆրանսիական հարաբերությունները շեշտված բնույթ չունեին: Այդ արշավանքներից հետո արդեն շփումները բազմացան և ավելի սերտ բնույթ ստացան: Որովհետև այդ արշավանքների ընթացքում եվրոպացի բազմահազար զորքերը, սպաներն և իշխանական ղեկավարները դեպի Երուսաղեմ արշավելու ճանապարհին անցնում էին և վերադառնում հայկական անկախ Կիլիկիո երկրամասով, օրերով մընում էին այստեղ և անձամբ շփվում հայերի հետ, ծանոթանում հայկական մշակույթին, ճարտարապետության, արվեստներին, արհեստներին և ի վերջո ստեղծում սերտ խնամիական կապեր:

---

15 Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 12, 1986, էջ 724: Histoire des Arméniens, Toulouse, 1986, p. 392.

16 Histoire des Arméniens, Toulouse, 1986, p. 392. «Արև» օրաթերթ, Կահիրե, 24 հոկտեմբերի 1987, էջ 3:

17 «Արև» օրաթերթ, նույն տեղում:

18 Աշոտ Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1964, էջ 418:

19 Marcel Duriat, L'Art Roman, Paris, 1982, p. 134.

20 Անդրե Մորուա, Փարիզ, Երևան, 1976, էջ 72:

Այստեղ պետք է հատուկ կերպով նշել նաև, որ Կիլիկիո հայոց վերջին արքաները՝ այսինքն Լուսինյաններն ունեին ֆրանսիական ազնվական ծագում: Որով այսպիսով քրիստոնյա այս երկու ժողովուրդները իրար ճանաչելով ավելի մոտեցան իրարու, մի բան, որ հայ գաղթականության առջև Ֆրանսիա մուտքն ավելի հեշտացավ: Իսկ 1375 թ. Կիլիկիո անկախության կործանումից հետո, հայերի գաղթի հոսանքն ավելի աճեց դեպի Ֆրանսիա[21]:

Փարիզի «Աշխարհ» թերթում կարդում ենք այն միտքը, որ պատմական Հայաստանում մատուռներ և տաճարներ կառուցողները (ակնարկելով հայ ճարտարապետներին—Ն. Տ. Մ.) հանդիսացան նախակարապետները ռոմանական և գոթական արվեստների[22]:

Իսկ Լոնդոնից Էջմիածին ժամանած անգլիացի մի հոգևորական՝ Օլիվեր Ջ. Մակթերնանը ուշադրությամբ դիտելով հայկական հանրահայտ խաչքարերն և Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսից նվեր ստացած մեր խաչքարերին նվիրված գեղեցիկ ալբոմը, տուն վերադարձից հետո նախ շնորհակալություն է հայտնում այդ «հիասքանչ նվերի» համար և իր 11 օգոստոսի 1989 թ. նամակում գրում է Վեհափառ Հայրապետին հետևյալ տողերը. «... Ես վստահ եմ, որ ուժեղ հայկական մի ազդեցություն կա Կելտական նախնական եկեղեցում: Ես փնտռելու եմ հարմար մի գիրք Կելտական խաչքարերի մասին և Դուք տեսնելու եք արտասովոր նմանությունը»:

Հայկական խաչքարերը կարելի է գտնել միայն Հայաստանում և սփյուռքի հայկական գաղթօջախներում: Դրանց նմանը ոչ մի այլ երկրում չկա աշխարհում: Հայկական քաչքարերը որպես պատկերաքանդակներով քարե կոթողներ ծագում են առել, տարածվել 4—7-րդ դարերում և դեռ շարունակվում են մինչև այսօր: Որոշ նմանությամբ դրանց նման քարե խաչեր ծագում են առել նաև այսօրվա Իռլանդիայի սահմանում և դրանք ծանոթ են որպես նախկին կելտական պաշտամունքային քարե հուշարձաններ: Դրանցից պահպանվել են շուրջ 150 հատ, որոնք կառուցվել են 8—12-րդ դարերում: Եվրոպացի մի շարք ուսումնասիրողներ ու գիտնականներ գտնում են, որ որոշ կապ կա հայկական և կելտական խաչքարերի միջև միևնույն ժամանակ նշելով, որ հայկական ոճի ազդեցությունն առկա է կելտական այս հուշարձանների վրա:

Վերածնունդ (ռենեսանս) հասկացողությունը կապված է Արևմտյան և Կենտրոնական եվրոպական երկրների գաղափարական և մշակութային զարգացման ժամանակաշրջանի հետ, երբ միջնադարյան մշակույթից անցում է կատարվել նոր ժամանակի մշակույթին՝ Իտալիայում 14—16-րդ, իսկ եվրոպական մյուս երկրներում 15-րդ դարի վերջից մինչև 16-րդ դարը: Իսկ որոշ մտավորականներ գտնում են, որ վերածնունդն Ասիայում տեղի է ունեցել Չինաստանում 8—12-րդ և Հնդկաստանում 9—13-րդ դարերում: Նկատի առնելով միջնադարում հայ մշակույթի բուռն զարգացումը հայ և օտարազգի գիտնականներ և մտավորականներ գտնում են, որ հայկական վերածնունդը տեղի է ունեցել 01—14-րդ դարերում, որով այն սկսած է եվրոպականից շուրջ 4—5 դար առաջ: Այն վերաբերում է անշուշտ ճարտարապետության, գրականության, համալսարանական կրթության, գիտական կենտրոնների և այլ ճյուղեր ու հանգամանքներ նկատի առնելով[23]:

---

[21] Նույն տեղում, էջ 419:

[22] «Աշխարհ» շաբաթաթերթ, Փարիզ, 24 սեպտեմբերի 1988, էջ 3:

[23] Հայկական սովետական Հանրագիտարան, հատոր 11, 1985, էջ 385—391:

* * *

Սույն տողերի հեղինակին մոտիկ ազգական և անվանակից Ռոբեր Տեր-Միքայելյանից[24] 8 Հունվարի 1987 թվակիր նամակ ստացվեց, որտեղ նա գրել է հետևյալը ֆրանսերեն լեզվով հետևյալ բովանդակությամբ.

«Կարծում եմ, որ Քրիստիանը[25] ձեզ նկարագրել է այն վայրերի և ձևի մասին, ուր մենք ապրում ենք, փոխարենն ես նարփակում եմ լուսանկարները մեր եկեղեցու, որ կառուցված է ռոմանո-բյուզանդական ոճով: Մի շարք հայ պրոֆեսորներ, որոնք բնակվում են Ֆրանսիայում, հաստատում են, որ Խաչակրաց իրենց առաջին արշավանքից վերադառնալով (պետք է լինի՝ ժամանելով Ֆրանսիա—Ն. Տ. Մ.) (10-րդ դարում), հայերը, որոնց ճարտարապետները փախչելով թուրքերից (արդեն) միացան խաչակիրներին իրենց ընտանիքների հետ և հրապուրված Օվերնյի[23] գավառով, որ նրանց հիշեցնում էր իրենց ծննդավայր երկիրը (Հայաստանը—Ն. Տ. Մ.), նրանք հաստատվեցին այստեղ և ծրագրավորեցին Ֆրանսիայում հինգ անանման եկեղեցիներ իրենց ոճով, **Կլերմոն-Ֆերանում, Սեն-Սատյուրնենում, Օրսիվալում, Իսուարում** և **Սեն-Նեկտերում:** Օվերնյում մի գյուղ և մի շարք ընտանիքներ կոչվում են ՀԱՅԵՐ, մի բան, որ հուզիչ է և սրտահույզ: Հայրս[27], որ բնիկ արաբկերցի է, հիացած այս երկրամասով, ուր նա ապրեց իր վերջին տարիները: Նա այժմ հանգչում է (թաղված է—Ն. Տ. Մ.) «Սեն-Նեկտերի գերեզմանոցում»:

Օվերնյում գտնվող ՀԱՅԵՐ (Désarméniens) կոչվող գյուղի մասին, որ նշվեց վերևում, մի հիշատակություն կա ֆրանսերեն «Հայոց Պատմություն» հաստափոր գրքում, որտեղ բառացի գրված է հետևյալը. «Ֆրանսիային վերաբերյալ» Օվերնյում մենք գտնում ենք (Փուի-դը-Դոմում) «Désarméniens» (ՀԱՅԵՐ) անունով կոչված մի գյուղ: Շրջակայքում բազմաթիվ ընտանիքներ 1930 թ. դեռ կրում էին (Désarméniens) անունը և կամ մի մոտիկ անուն: Այս անվանումները պետք է կապվեն հայկական մի ներկայության, դա արդեն հավանական է, փոխարենը կարելի է ճշտել ժամանակաշրջանը, որ կարող է լինել ուշ Միջնադարը որպես ավելի արդի մի ժամանակաշրջան: Բացառված չէ նաև, որ հայերը հետևած լինեն Ֆրանսիա, Լևոն 6-րդին (հայոց թագավորին—Ն. Տ. Մ.) Կիլիկյան թագավորության անկումից հետո»[28]:

---

[24] **Ռոբեր Տեր-Միքայելյան**—Ծնվել է Փարիզում 1921 թ.: Ալեքսանդր և Ֆրանսուհի Մարիա Տեր-Միքայելյանների ընտանիքում: 18 ու կես տարիքում նա զինվորագրվել է ֆրանսիական բանակում 1929 թ. սեպտեմբերին, կռվելու համար ֆաշիստական Գերմանիայի դեմ: Որոշ ժամանակ հետո գերի է մնացել թշնամու ձեռքը և տարվել Կոբլենց (Cologne) քաղաքի ճամբարը, ուր մնացել է մինչև 1945 թ. մարտ ամիսը, որտեղից փախել է Ֆրանսիա: Հոկտեմբերին նա ամուսնացել է Սեն-Նեկտեր գյուղի բնակիչ Աննեթ Վիժինեքսի հետ այս գյուղի եկեղեցում: Ռոբերն ու Աննեթն այս գյուղում ունեն մի հյուրանոց, որի եկամուտով նրանք ապրում են այսօր Օվերնյի գեղատեսիլ գավառում:

[25] **Քրիստիան Լըգրան**—Քույրն է Միշել Լըգրանի: Սրանք հայտնի երգիչ և երգչուհի են Ֆրանսիայում: 1986 թ. նոյեմբեր ամսին մի շարք համերգներով հանդես եկան Երևանում, Լենինգրադում և Մոսկվայում, ինչպես նաև տարբեր տարիներում բազմաթիվ երկրներում: Սրանց մոր՝ Մարսել Լըգրանի հայրը հանդիսացել է բնիկ արաբկիրցի դեղագործ Սարգիս Տեր-Միքայելյանը, եղբայրը վերոհիշյալ Ալեքսանդր Տեր-Միքայելյանի:

[26] Օվերնյ (Auvergne) —Հարավային Ֆրանսիայի կենտրոնական մասում գտնվում է Փուի-դը-Դոմ (Puy-de-Dôme) նահանգի Օվերնյ գավառը, որի կենտրոնական քաղաքն է Կլերմոն-ֆերանը, Փարիզից 382 կմ դեպի հարավ:

[27] **Ռոբերի հայրը՝ Ալեքսանդր Տեր-Միքայելյան**—Ծնվել է Արաբկիրում 1885 թ., մահացել ու թաղվել Սեն-Նեկտեր գյուղի գերեզմանոցում 1950-ական թվականներին:

[28] Histoire des Arméniens (Sous la direction de Gérard Dédéyan), Toulouse, 1986, p. 397.

Օվերնյ գավառում կան շուրջ 250 հին և նոր արքատեղիներ՝ վանքեր, եկեղեցիներ և մատուռներ: Հների մեջ կան քանդված և այժմ գործող եկեղեցիներ: Օվերնյ գավառը բաժանված է երկու մասի՝ հյուսիսային և հարավային: 12-րդ դարից սկսած կառուցված եկեղեցիներում կան հինգը, որոնք ենթադրվում են շինված լինել եվրոպացի խաչակիրների հետ Կիլիկիայից գաղթած հայերի և կամ բուն Հայաստանից ժամանած հայ փախստականների ձեռամբ, որոնք հայրենիքից ակամա հեռացել են թուրք-մոնղոլների արշավանքներից և Անիի թագավորության ու մայրաքաղաքի անկումից հետո, խուսափելու համար այդ վայրի ցեղերի սարսափից ու կոտորածից:

Շինարար հայերը շատ դարեր առաջ ունեցել են արքատեղիներ կառուցելու տեսակետից բազում փորձ և հմտություն: Այժմ հայի հայրենիքում կանգուն կան բազմաթիվ եկեղեցիներ, որոնք կառուցված են 10-րդ դարից առաջ, որով Հայաստանից և ապա ավելի ուշ Կիլիկիայից գաղթած հայ ճարտարապետներն անկասկած տեսած, ուսումնասիրած և նույնիսկ կառուցած պետք է լինեին եկեղեցիներ իրենց հայրենիքում: Որով Ֆրանսիա գաղթելուց առաջ նրանք ունեին մեծ փորձ ու վաստակ:

Կա նաև երկրորդ կարևոր մի հանգամանք ևս: Դա այն է, որ Ֆրանսիա ներգաղթած այն հայերը, որոնք 10—14-րդ դարերում հաստատվեցին Օվերնյ գավառում, այն էլ բնիկ ֆրանսիացիների շրջանակներում, անձամբ տեսան այդ վայրերում ֆրանսիացիների կողմից ռոմանական ոճով նախօրոք կառուցված եկեղեցիները, որով երբ նրանք հաստատվեցին այդ գավառում, պարզ է, որ նրանց կերտած եկեղեցիները պետք է լինեին հայկական ավանդական և ռոմանական ճարտարապետական ոճերի համատեղ մի կառույց:

Հայ և ռոմանական (ապագայում գոթական) եկեղեցիներն ունեցել են ոճական տարբերություններ:

Հայկական հնագույն եկեղեցիներն սկզբում ունեցած են հավասար թևերով խաչաձև կամ բոլորակաձև հատակագիծ և եկեղեցու կենտրոնից վերև է բարձրանում սրածայր գմբեթը, հայկական վեղարի նմանողությամբ: Այսպես, օրինակի համար, 4—10-րդ դարերում կառուցված Ս. Էջմիածնի (4-րդ դար), Ս. Գայանեի (7-րդ դար), Ս. Հռիփսիմեի (7-րդ դար), Անիի Մայր Տաճարի (10-րդ դար) և Անիի Հովվի (10-րդ դար) եկեղեցիները: Հետագայում է, որ մի շարք եկեղեցիներ ուղղանկյուն (բազիլիկաձև) բնույթ են ստանում, ինչպես Օձունի (7-րդ դար) և Սանահնի (10—14-րդ դարեր) եկեղեցիները:

Մինչդեռ ռոմանական, ապա գոթական վաղ շրջանի և հետագայի եկեղեցիները բոլորովին տարբեր ոճի են: Այսպես, օրինակի համար, Իտալիայի Բրեսկիայի (10—11-րդ դդ.), Վենետիկի Ս. Մարկոսի (11-րդ դար), Պուաթիեի Նոտր Դամ լա Գրանդի (10-րդ դար) եկեղեցիները, Շարթրի (12-րդ դար) և Սիենայի տաճարների գմբեթները կամ կիսագնդաձև են և կամ բարակ և երկար սրածայր աշտարակներ, բոլորովին տարբեր հայկական եկեղեցիներից:

Այժմ անդրադառնանք Օվերնյ գավառում գտնվող հայկական ծագում ունեցող հինգ տարբեր եկեղեցիների մասին:

Սեղանիս վրա գտնվում է ֆրանսիացի հոգևորական՝ Կանոնիկոս Բեռնար Կրապլեի նկարագրող գիրքը՝ «Ռոմանական Օվերնյ» վերնագրով[29],

---

[29] Chanoine Bernard Craplet, Auvergne Romane, 5e édition, pp. 50—51.

որից օգտվում ենք, առնելով բոլոր չափագրումները, լուսանկարներն և տեղեկությունները:

1. **Կլերմոն-Ֆերան** (Clermont-Ferran)—Կենտրոնական քաղաքն է Puy-de-Dôme նահանգի և գտնվում է Փարիզից դեպի հարավ, 382 կմ հեռու: Այստեղ կան համալսարան, եպիսկոպոսարան, գոթական ոճի տաճար, ինչպես նաև 12-րդ դարում կառուցված մի եկեղեցի Փորի Աստվածամոր (Notre Dame du Port), որի նախագծողը հավանաբար մի հայ ճարտարապետ պետք է լինի, եկած Հայաստանից: Այս վայրում ծնված է ֆրանսիացի հայտնի մաթեմատիկոս, ֆիզիկոս, փիլիսոփա և գրող Բլեզ Փասկալը[30]:

Փորի Աստվածամոր եկեղեցին գոթական ոճի փառավոր մի շինություն է, կառուցված մուգ գույնի քարով: Եկեղեցին ռոմանական նշանավոր մի հուշարձան է[13]: Այն կառուցված է 1185 թ. և մեծապես տուժած 1478 թ. մեծ երկրաշարժի ընթացքին: Նորոգված է 1841-ին: Վերջերս՝ 1974-ին ավարտվեցին եկեղեցու արևմտյան ճակատի վերանորոգությունները[32]:

2. **Սեն-Սատյուրնեն** (Saint Saturnin)—Puy-de-Dôme նահանգի մի գյուղ, որ ունի շուրջ հազար բնակիչ: Այն գտնվում է Լիմանյն դաշտավայրի եզերքին, Կլերմոն-Ֆերան կենտրոնից դեպի հարավ: Այստեղ կա 12-րդ դարի գեղեցիկ մի եկեղեցի, միջնադարյան հոյակապ մի դղյակ (15-րդ դարի) և 16-րդ դարի պաշտպանական պատնեշներ[33]:

Կառուցման ճշգրիտ թվականը հայտնի չէ, բայց ստույգ ապացույցներ կան, որ այն գոյություն ուներ 1157 թ.: 1789 թ. հեղափոխության ժամանակ այն փրկվեց ավերածությունից, որովհետև շնորհիվ մի տիկնոջ, որ գնեց եկեղեցին, ինչպես նաև մոտակայքում գտնվող Սենտ-Մադլենի մատուռը, վերազարդարեց խռովությունից հետո: Միայն անդամահատվեց զանգակատան նետի ծայրը: Մալայն այն նորոգեց 1852 թ., իսկ 1880—1898 թթ. եկեղեցին հիմնովին վերանորոգվեց[34]:

3. **Օրսիվալ** (Orcival)—Puy-de-Dôme նահանգի լեռնային շրջանում գտնվող մի փոքր գյուղ է, որ ունի շուրջ 500 բնակիչ: Այն գտնվում է Ռոշֆոր-Մոնտանյը բնակավայրի արևելյան կողմում: Եկեղեցին ունի Օվերնյի ռոմանական ոճ (1125—1175 թթ., կամարները 15-րդ դարի), որ ունի ութանկյուն մի գմբեթ սյուների վրա, ընդարձակ մի դամբարան և զարդարված խոյակներ[35]:

Այս եկեղեցին Օվերնյի ռոմանական արվեստի գլուխ գործոց կառույցներից մեկն է՝ Օրսիվալի Աստվածամոր բազիլիկան: Եկեղեցին տիրում է փոքրիկ գյուղի շենքերի վրա: Եկեղեցին կառուցված է որպես ուխտավայր: Սրբատեղիի տոնը կատարվում է Համբարձման օրը, երբ բազմաթիվ ուխտավորներ են գալիս այստեղ: Հավատացյալներից բացի այցելում են նաև զբոսաշրջիկներ, հնագետներ, ինչպես նաև ռոմանական արվեստի մասնագետներ[36]:

Առաջին անգամ այս եկեղեցին հիշվում է Ալեքսանդր Գ պապի 1178 թ. կոնդակում: Եկեղեցին գոյություն չուներ 1146 թ.: Ենթադրվում է, որ այն

---

30 Grand Larousse Encyclopédique, Tome 3e, Paris, 1964, p. 196.

31 Նույն տեղում:

32 Bernanrd Craplet, Auvergne Romane, pp. 50—57.

33 Grand Larousse Encyclopédique, Tome 9e, p. 536.

34 Auvergne Romane, p. 117.

35 Grande Larousse Encyclopédique, Tome 7e, p. 983.

36 Auvergne Romane, p. 43.

կառուցված կլինի 1169 թ.: 1789-ի ֆրանսիական հեղափոխության ժամանակ հոգևորականներին տրամադրված ատյանը վերացավ: Եկեղեցու կահույքը վաղվեց: Զանգակատան ներսի մեկ մասն անդամահատվեց: 19-րդ դարում վերանորոգվեց վնասված եկեղեցին[37]:

4. **Իսուար** (Issoire)—Քաղաք Puy-de-Dôme նահանգում, Ալիեյի մոտ, որ ունի շուրջ 15 հազար բնակչություն: Միջնադարյան եկեղեցին Օվերնյի ռոմանական կատարյալ ոճն ունի (12-րդ դար): Ավագ խորանի ետևի մասում կան հարթաքանդակներ, քանդակված խոյակներ (Վերջին Ընթրիքը, Սուրբ կանայք)[38]:

Իսուարի եկեղեցին նվիրված է Սուրբ Օստրըմունենի (Saint-Austremoine) հիշատակին՝ Օվերնյի առաջին առաքյալին, որ ըստ Գրեգուար դը Տուրի, 250 թ. հետո քրիստոնեություն քարոզեց այս գավառում: Եկեղեցու շինության ճշգրիտ թվականը հայտնի չէ, բայց ենթադրվում է, որ այն կառուցված պետք է լինի 12-րդ դարի կեսերին: 1575 թ. կրոնական պատերազմների ժամանակ հարյուրապետ Մերլը (Merle) գրավեց Իսուարը, սպանվեցին եկեղեցու հոգևորականներն և թալանվեց եկեղեցին: Մեծ ավեր պատճառվեց աշտարակներին, որոնք փլվեցին: 1789 թ. հեղափոխության ժամանակ բոլորովին թալանվեց եկեղեցին, բայց այն դեռ կանգուն մնաց: 19-րդ դարում այն կրկին վերանորոգվեց[39]:

5. **Սեն-Նեկտեր** (Saint-Nectaire)—Գյուղը գտնվում է Puy-de-Dôme-ի նահանգում, Դոր լեռների թավուտքում: Ունի շուրջ հազար բնակչություն: Եկեղեցին 12-րդ դարի շինություն է, Օվերնյի ռոմանական ոճի մի գլուխգործոց, որ ունի խոյակներ և հարուստ գանձարան: Ինչպես հաստատում են գալլո-ռոմանական հետքերը, Սեն-Նեկտերի հանքային ջրերն օգտագործված են երկար ժամանակներից ի վեր, որոնք ունեն սոդայի բիկարբոնատի և խլորի աղեր: Այս ջրերը հաջողությամբ օգտագործված են հատկապես երիկամային հիվանդությունների ժամանակ[40]:

Բնության կանաչության մեջ գտնվող այս գյուղի եկեղեցին թեպետև փոքր է իր չափերով (մոտավոր երկայնքը՝ 37, լայնքը՝ 11 և բարձրությունը՝ 15 մետր), սակայն հոյակապ մի կառույց է այն, բառի իսկական իմաստով: Գրքի հեղինակը (Բերնար Կրապլե) գրում է, որ «ճարտարապետին հաջողվել է այն ցույց տալ մեծ, մի բան, որ այսպիսին չէ, այլ իր արվեստի կատարելապես վարպետությամբ միայն»: Եկեղեցու երկարության կտրվածքի նկարը ցույց է տալիս դրա բազմազանությունը: Սեն-Նեկտերի սրբատեղին Օվերնյի (Basse-Auvergne) ամենահրապուրիչ կառույցներից մեկն է: Դրա համար է, որ զբոսաշրջիկները հիանում են այս եկեղեցին դիտելով[41]:

Սուրբ Նեկտերը շուրջ 250-ական թթ. հանդիսացած է Սուրբ Օստրոմունենի ընկերակիցներից մեկը, քրիստոնեության քարոզչության ժամանակամիջոցում: Սուրբ Նեկտերի հիշատակին նվիրված այս եկեղեցին ենթադրվում է կառուցված լինել 1178 թ.[42]:

Վերջացնելով հարավային Ֆրանսիայի Օվերնյ շրջանում գտնվող վերոհիշյալ միջնադարյան հինգ եկեղեցիների մասին այս ուսումնասիրությունը,

---

[37] Նույն տեղում:
[38] Grand Larousse Encyclopédique, Tome 6e, p. 257.
[39] Auvergne Romane, p. 96.
[40] Grand Larousse Encyclopédique, p. 529.
[41] Auvergne Romane, p. 105.
[42] Ditto, p. 107.

այստեղ ներկայացվում են դրանց չափերը[43], ինչպես նաև դրանց յուրաքանչյուրի փոքր հատակագիծը[44], այուների նմանության[45], Սեն-Նեկտեր եկեղեցու բարձրության երկու կտրվածքների[46] նկարները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինչպես ֆրանսերեն լեզվով հրատարակված «Հայոց Պատմություն» գրքում նշված և Սեն-Նեկտեր գյուղի եկեղեցում 1945 թվականին ամուսնացած և մինչև այսօր այս գյուղում բնակվող ու աշխատող Ռոբեր Տեր-Միքայելյանի կարծիքով սույն տողերի հեղինակը կարծում է, որ որոշ շեշտված կապակցություն կա հայկական և ռոմանական մի շարք եկեղեցիների ճարտարապետական արվեստի ու ոճի մեջ: Հայկական անկախ Կիլիկիո թագավորության և հետագայում Անիի թագավորության թուրք-թաթար-մոնղոլների կողմից կատարված կործանումից հետո, դեպի Ֆրանսիա արտագաղթած հայ ճարտարապետներն և շինարար բանվորները պարզ է, որ պետք է զբաղվեին իրենց իմացած պաշտոնով և արհեստով (ճարտարապետություն և եկեղեցաշինության՝ քարգործ վարպետների միջոցով): Ֆրանկ խաչակիրների Երուսաղեմից դեպի Եվրոպա վերադարձն էլ Կիլիկյան հավատակից երկրի սահմանով, նաև ֆրանկո-հայկական սերտ հարաբերությունները, պատճառ դարձան, որ հայ ճարտարապետներ ու շինարար բանվորներ, գնային ու հաստատվեին Ֆրանսիայում, ուր զբաղվեցին եկեղեցիներ կառուցելով, տեղի բնակչության պատվերով:

Երկու լուրջ ազդակներ գալիս են շեշտելու այս կարծիքի հավանականությունը: Ա. Նախ վերոհիշյալ հինգ եկեղեցիների խաչաթև կառույցը և ապա նաև Բ. եկեղեցու գմբեթի հայկական վեղարի ակնհայտ ձևը:

Ա. Հայաստանում կառուցված առաջին եկեղեցիները հավասար թևերով խաչի ձև ունեին (օրինակ՝ Էջմիածինը), ապա նաև բազիլիկի ոճով (Եղվարդ, Ծիծեռնավանք): Օվերնյի վերոհիշյալ հինգ եկեղեցիները թեև բազիլիկի ոճի են, սակայն ունեն նաև խաչաձև հատակագիծ, ըստ որում հյուսիսային և հարավային թևերն ավելի կարճ են և գտնվում ավելի դեպի արևելք՝ պատարագի Սեղանի մոտիկ: Մինչդեռ նույն ժամանակներում կառուցված ֆրանսիական այլ եկեղեցիներ (Chanteuges, Brageac և այլն), որոնք գտնվում են Բրիվադուայում և Վերին-Օվերնյում, միայն բազիլիկի ոճի են և կողմնակի թևեր չունեն:

Բ. Վերոհիշյալ հինգ եկեղեցիներն ունեն հայկական վեղարի ձևով կարճ գմբեթ, մինչդեռ Օվերնյ ռոմանական ոճի մյուս եկեղեցիներն ունեն սրածայր մի գմբեթ (ébreuil), կամ տափակ մի կարճ աշտարակ (veauce): Որով հայկական վեղարաձև գմբեթ ունեցող եկեղեցիները հստակ կերպով զանազանվում են մյուսներից:

Վերոհիշյալ հինգ եկեղեցիները կառուցված են գրեթե նույն ժամանակաշրջանում՝ 12-րդ դարում: Երեքը կառուցված են 12-րդ դարի կեսերին, իսկ մնացածն էլ նույն դարի երկրորդ կեսին: Պետք է նկատի առնել նաև,

---

43 Ditto, p. 40.
44 Ditto, pp. 28—29.
45 Ditto, pp. 32—33.
46 Ditto, pp. 34 & 112.

որ կառուցումից դարեր հետո, վերանորոգման ժամանակ, նոր հավելումներ են կատարված այդ եկեղեցիներում:

Վերոհիշյալ հինգ եկեղեցիները հայկական և ռոմանական-գոթական ոճերի մի խառնուրդ է, որտեղ, մեր կարծիքով, զգալի կերպով երևում է հայ ճարտարապետների (հավանաբար նաև հայ որմնադիրների) մտահղացման և ձեռքի աշխատանքը:

Մնում է միայն ապավինել հետագա հայ ճարտարապետների, պատմաբանների և մասնագետների պրպտող մտքին ու աշխատանքին, որպեսզի ձեռք բերելով նոր ճշգրիտ փաստեր կամ փաստաթղթեր, կարելի լինի ցույց տալու շինարար և հմուտ հայ ճարտարապետների աշխատանքի բաժինը վերոհիշյալ վարկածի բարեհաջող լուծման համար:

ԿԱՐԵՎՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ (ՄԵՏՐՈՎ)

	Կլերմոն-Ֆերան 1185 թ.	Սեն-Սատյուրնեն 1157 թ.	Օրսիվալ 1169 թ.	Իսուար 12րդ դ. կեսերը	Սեն-Նեկտեր 11րդ դար
Երկարություն	45	32	41.35	65.10	37.65
Միջին լայնություն	13.30	11.50	14.15	16.78	10.88
Ատյանի լայնություն (ամենից այուն)	6.14	5.42	6.62	7.80	5.68
Բարձրություն					
Մեծ ատյանի	18.	14.80	17.40	18.80	14.98
Ցածր կողմերի	8.94	7.15	8.94	9.55	7.52
Գմբեթի	22.	18.85	21.40	23.30	18.50
Կիսագնդի կամարներ	7.41	5.85	7.45	7.82	6.13 (47)

[47] Chanoine Bernard Craplet, Auvergne Romane, p. 40.